ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

22 մարտի 2016 թվականի **թիվ 2** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում լիազորված մարմինների փոխգործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան՝ «Սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում համաձայնեցված քաղաքականություն իրականացնելու մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 13 հավելված) 6-րդ կետի իրագործման եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում համաձայնեցված քաղաքականություն իրականացնելու նպատակներով

հանձնարարում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում սույն

Հանձնարարականը հրապարակելու օրվանից կիրառել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում լիազորված մարմինների փոխգործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցներ՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում լիազորված մարմինների փոխգործակցության արդյունավետության բարձրացման հիմնական ուղղություններին համապատասխան՝ հավելվածի համաձայն:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի
մարտի 22-ի թիվ 2 հանձնարարականի

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում լիազորված մարմինների փոխգործակցության արդյունավետության բարձրացման

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում լիազորված մարմինների (այսուհետ, համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ, լիազորված մարմիններ) փոխգործակցության հիմնական նպատակն անդամ պետությունների սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակը բարձրացնելն է, որի արդյունքում կապահովվի՝

ա) սպառողների իրավունքների արդյունավետ պաշտպանության ստեղծում.

բ) անորակ, նմանակված (կոնտրաֆակտ), կեղծված եւ սպառողների կյանքի, առողջության, գույքի եւ շրջակա միջավայրի համար վտանգավոր ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման ռիսկերի նվազեցում.

գ) բարեխիղճ մրցակցության զարգացում՝ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) որակի նկատմամբ սպառողների վստահությունը բարձրացնելու միջոցով.

դ) անվտանգ, որակյալ, էներգաարդյունավետ ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ) արտադրելու եւ իրացնելու համար

պայմաններ ստեղծելու նպատակով անդամ պետությունների տարածքներում արտադրվող արտադրանքի որակի հսկողությանը եւ անվտանգությանը ներկայացվող պահանջների օպտիմալացում.

ե) վեճերի մինչդատական քննության համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում.

զ) սպառողների իրավունքների հասարակական պաշտպանության մեխանիզմի կատարելագործում.

է) սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում որակավորված կադրերի պատրաստում.

ը) սպառողների եւ ձեռնարկատերերի համայնքի իրավական գրագիտության մակարդակի բարձրացում:

2. Լիազորված մարմինների փոխգործակցության հիմնական ուղղություններն են՝

ա) անդամ պետությունների՝ սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենսդրության կատարելագործում, այդ թվում՝ միջազգային փորձը հաշվի առնելով.

բ) անվտանգ, որակյալ, էներգաարդյունավետ ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ) արտադրելու եւ իրացնելու համար պատրաստողների եւ վաճառողների մոտիվացման համակարգի ստեղծում.

գ) անորակ, նմանակված (կոնտրաֆակտ), կեղծված եւ սպառողների կյանքի, առողջության, գույքի եւ շրջակա միջավայրի համար վտանգավոր ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման բացահայտված փաստերի, այդպիսի ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումը կանխարգելելուն ու կանխելուն ուղղված կիրառվող միջոցների, ինչպես նաեւ անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների կողմից սպառողների իրավունքների խախտումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում.

դ) անորակ, նմանակված (կոնտրաֆակտ), կեղծված եւ սպառողների կյանքի, առողջության, գույքի եւ շրջակա միջավայրի համար վտանգավոր ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման բացահայտված փաստերի վերաբերյալ, այդպիսի ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումը կանխարգելելուն ու կանխելուն ուղղված կիրառվող միջոցների, ինչպես նաեւ անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների կողմից սպառողների իրավունքների խախտումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության փոխանակման մեխանիզմի ստեղծում.

ե) Միության շրջանակներում ընդհանուր գործընթացների իրականացման ընթացքում սպառողների իրավունքների պաշտպանությանն առնչվող տեղեկատվական փոխգործակցության համակարգի ստեղծում՝ Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով.

զ) սպառողների իրավունքների պաշտպանությանն առնչվող համատեղ գիտական հետազոտությունների իրականացման ապահովում, այդ թվում՝ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) էլեկտրոնային առեւտրի պրակտիկայի ընդլայնումը հաշվի առնելով.

է) սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում անդամ պետությունների՝ փորձագիտական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների միասնական բազայի ստեղծում եւ փորձագիտական կազմակերպությունների կողմից չյուրացված, նոր հետազոտությունների տեսակներ իրականացնելու հնարավորության մասին տեղեկացում.

ը) սպառողների իրավունքների հասարակական պաշտպանության մեխանիզմի զարգացման համար պայմանների ստեղծում:

3. Սույն Հիմնական ուղղությունների իրագործման շրջանակներում նպատակահարմար է անցկացնել լիազորված մարմինների կողմից անդամ պետություններում սպառողների իրավունքների պաշտպանության համակարգերի դիտանցում, որի ընթացքում իրականացվում է՝

ա) անդամ պետության՝ սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենսդրության վերլուծություն եւ դրա կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում.

բ) սպառողների իրավունքների պաշտպանության մասին միջազգային օրենսդրության վերլուծություն.

գ) սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում անդամ պետությունների իրավակիրառ պրակտիկայի վերլուծություն.

դ) սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում անդամ պետությունների դատական պրակտիկայի վերլուծություն.

ե) սպառողների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ բնակչության տեղեկացման ազգային համակարգերի աշխատանքի վերլուծություն եւ դրանց կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում.

զ) անդամ պետությունների՝ սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջների խախտումների բացահայտմանը եւ վերացմանն ուղղված միջոցների կիրառման վերլուծություն.

է) սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում վիճակագրական դիտարկումների արդյունքների, թերություններ ունեցող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) եւ վտանգավոր ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձեռքբերման եւ օգտագործման կամ սպառողներին ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ ոչ ժամանակին, ոչ ամբողջական, ոչ հավաստի կամ մոլորության մեջ գցող տեղեկատվության տրամադրման հետ կապված, սպառողների կյանքին եւ առողջությանը, շրջակա միջավայրին եւ սպառողների գույքին վնաս հասցնելու դեպքերի վերլուծություն.

ը) սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում լիազորված մարմինների եւ սպառողների հասարակական միավորումների փոխգործակցության արդյունավետության վերլուծություն: